ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 սեպտեմբերի 2018թ. թիվ 237-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի ԹԻՎ 119-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 384-Ն որոշման, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Լոռու մարզի բնակչության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների լիարժեք կազմակերպման և իրականացման նպատակով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Ռազմական դրության ժամանակ և խաղաղ պայմաններում Լոռու մարզի բնակչության և քաղաքացիական պաշտպանությանն ուղղված աշխատանքների պլանավորման և կազմակերպման, խոցման օջախներում փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար Լոռու մարզպետարանի վարչությունների, Լոռու մարզի համայնքների ղեկավարների, Լոռու մարզի կազմակերպությունների (համաձայնությամբ) ստորաբաժանումների հիման վրա ստեղծել Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության հետևյալ ծառայությունները՝

1) Տրանսպորտի, կապի և ազդարարման միասնական՝ ծառայության պետ նշանակել Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետին:

2) Ինժեներական և կոմունալ-տեխնիկական միասնական՝ ծառայության պետ նշանակել Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետին:

3) Բժշկական՝ ծառայության պետ նշանակել Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին:

4) Առևտրի և սննդի՝ ծառայության պետ նշանակել Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին:

5) Էներգետիկայի և լուսաքողարկման՝ ծառայության պետ նշանակել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Դեբեդ» մասնաճյուղի տնօրենին:

6) Բույսերի և կենդանիների պաշտպանության՝ ծառայության պետ նշանակել Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետին:

7) Հասարակական կարգի պահպանման՝ ծառայության պետ նշանակել ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության պետին:

8) Նյութատեխնիկական մատակարարման՝ ծառայության պետ նշանակել Լոռու մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին:

9) Գազամատակարարման՝ ծառայության պետ նշանակել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Լոռու գազամատակարարման և գազաֆիկացման մասնաճյուղի տնօրենին:

10) Բնակչության հատուկ սպասարկումների՝ ծառայության պետ նշանակել Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետին:

2. Հաստատել՝

1) Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կանոնադրությունները՝

ա. Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության տրանսպորտի, կապի և ազդարարման միասնական ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի.

բ. Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության ինժեներական և կոմունալ-տեխնիկական միասնական ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի.

գ. Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի.

դ. Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության առևտրի և սննդի ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 4-ի.

ե. Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 5-ի.

զ. Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 6-ի.

է. Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգի պահպանման ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 7-ի.

ը. Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության նյութատեխնիկական մատակարարման ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 8-ի.

թ. Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության բնակչության հատուկ սպասարկումների ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 9-ի.

ժ. Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության գազամատակարարման ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 10-ի.

2) Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության ծառայության տարեկան աշխատանքային պլանի օրինակելի ձևը՝ համաձայն հավելված 11-ի:

3. Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերին՝

1) Մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ը մշակել, ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համաձայնեցնել և մարզպետի հաստատմանը ներկայացնել քաղաքացիական պաշտպանության ծառայության հաջորդ տարվա տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն սույն որոշման հավելված 11-ով հաստատված օրինակելի ձևի.

2) Մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը վերամշակել, ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության, քաղաքացիական պաշտպանության հանրապետական համապատասխան ծառայության հետ համաձայնեցնել և մարզպետի հաստատմանը ներկայացնել ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը.

3) Ելնելով ծառայության առջև դրված խնդիրներից, միջոցներ ձեռնարկել ծառայության կազմավորումներն անհրաժեշտ քանակի ուժերով ու միջոցներով ապահովելու ուղղությամբ՝ ներգրավելով նաև Լոռու մարզում գործող համապատասխան կազմակերպություններին.

4) Հետևողական աշխատանք տանել ծառայության մշտապես պատրաստ լինելու ուղղությամբ:

4. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Լոռու մարզպետը:

5. Որոշումը հայտարարել ըստ առնչության:

6. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. ապրիլի 27-ի թիվ 119-Ա որոշումը:

Invalid signature

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Հ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

2018թ. սեպտեմբերի 6
ք.Վանաձոր